

ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՏՅԱՑ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ «ՆՎԱՃՈՒՄԸ»

Արտաշես Շահնազարյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի վարիչ

Ի պատասխան Ադրբեջանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար, պատմական գիտությունների թեկնածու, նաև փիլիսոփայական գիտությունների դոկտոր ու ադրբեջանական չափանիշներով ակադեմիկոս Ռ. Մեհթիևի ստորագրությամբ հրապարակված «Գորիս 2010. արևուրդի թատրոնի սեզոնը» խորագրով կեղծագրի (<http://www.Trend.az.29.10.2010>) և ի հավելումն պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բ. Հարությունյանի հիմնավոր հակադարձման («Վէմ», 2010, No 4, էջ 24-57, ռուսերեն տարբերակը՝ <http://www.armenia.ru/politices/2011/02/21/historian>) հանդես եկանք լրացում-անդրադարձով («Վէմ», 2011, No 2, էջ 164-183), ռուսերեն տարբերակը՝ [www.regnum.ru \(news\) 1478277.html](http://www.regnum.ru/news/1478277.html)):

Մենք հիմնական շեշտը դրել էինք ժամանակին «ինտերնացիոնալիստ» ու գիտական կոմունիզմ կոչված կեղծ գիտություն դասավանդած Ռ. Մեհթիևի պատմաշինարարության տեղի սղության պատճառով Բ. Հարությունյանի հակադարձմանը չարժանացած նենգափոխումների վրա: Միաժամանակ, պարսիկ հանճարեղ բանաստեղծ Նիզամու օրինակով ցույց էինք տվել, որ Ադրբեջանում օտար մշակութային ժառանգության պետական մակարդակով կողոպուտը միայն հայկականով չի սահմանափակվում: Քանի որ ստի ոտքերը կարճ են, հիմնականում օտարալեզու սկզբնաղբյուրների ու գրականության միջոցով մեհթիևյան մտավարժանքների մերկացումն ու իրերն իրենց անունով կոչելը մեզանից մեծ ջանքեր կամ երկար ժամանակ չխլեց: Փոխարենը միջազգային գիտական շրջանակների ծաղրի առարկա ադրբեջանական քարոզչամեթոդային «Ադրբեջանցի» էդուարդ Գրիգորյանի, «պարսիկ» Նիզամի Գյանջևու և «հայ» Մովսես Կաղանկատվացու մասին կամ Արտաշես Շահնազարյանի զառամախտը՝ վերտառությամբ և «Ս. Ա.» ստորագրությամբ երկու էջանոց հիմարության գովք հիշեցնող «պատասխան» մոզոնելու համար պահանջվեց ութ ամիս ([http://www.aze.az/news\\_ob\\_azerbayjance\\_eduarde\\_78367.html](http://www.aze.az/news_ob_azerbayjance_eduarde_78367.html)):

Ջարմանալին ոչ այնքան կեղծարարության, տգիտության, տափակ հումորի ու զազրախոսության առումներով «Ս. Ա.» կոչվածի բացառիկ օժտվածությունն է, որքան այն, որ եթե ադրբեջանական «պատմագիտության» ողջ «պերճանքն» ու թշվառությունն ի ցույց դնելու համար ինձանից պահանջվել էր քսան էջ, ապա իր անուն-ազգանունից ամաչած մեր վայ «ընդդիմախոսից»՝ ընդամենը երկու: Հիրավի, Ի. Գյոթեն միանգամայն իրավացի էր, գրելով հետևյալը. «Այնտեղ, որտեղ ընդունված է հիմարությունը, այնտեղ

բանականությունը անմտություն է»: Դա, անշուշտ, մերօրյա ադրբեջանական հայատյաց «մտավորականի» տիպիկ օրինակ այդ ողորմելի գրչակի համար հսկայական նվաճում է: Արդյունքում իրականությունից նրա զառանցանքների հեռավորությունն ուղիղ համեմատական է Ադրբեջանից իր հայրենի թուրան ընկած տարածությանը:

«Ս. Ա.» կոչվածին արժանին մատուցելով և պուշկինյան «Գովքն ու զրպարտանքն անտարբեր ընդունիր», //Եվ հիմարի հետ մի վիճիր» խորհրդին հետևելով՝ նրան անպատասխան թողեցինք: Սակայն բուհապեշտյան վախկոտ ու ստրկահոգի մարդասպան Ռամիլ Սաֆարովի արտահանձնման հետ կապված վերջին զարգացումները հաստատելով Ռ. Մեհթիևին հակադարձելիս մեր կատարած «ներկայացումս ադրբեջանցիների հետագա համախմբմանն է ուղղորդված Ղարաբաղյան հիմնահարցի շուրջ այդ երկրում ծավալվող հակահայ անգուսպ հիստերիան, որի գլխավոր նպատակն իր էթնոմշակութային հոգեկերտվածքի հիմքում հակահայությունն ունեցող կառավարելի, զոմբիացված ազգի ձևավորումն է» դիտարկումը՝ մեզ ստիպեցին կրկին գրիչ վերցնել: Քնած անմեղ հայ սպային հայատյացության հողի վրա զազանաբար կացնահարած այդ կինանտրոպին հերոսացնելը և Ադրբեջանը համակած հայատյաց զանգվածային հոգեգարությունը փաստում են, որ եթե այդպես շարունակվի, ապա ալիևյան վարչախումբն ուր որ է կհասնի իր նպատակին: Բանը հասել է նրան, որ Ադրբեջանում արդեն հոգեբուժական օգնության կարիք ունեն անգամ հոգեբույժները: Դրա վկայությունն է սպայական պատիվ հասկացության այդ հակոտնյային ներում շնորհելու առթիվ Ալիև կրտսերին ադրբեջանական հոգեբուժարաններից մեկի բուժանձնակազմի հայտնած երախտագիտությունը: Պակաս ողբալի չէ Ռամիլ Սաֆարովի արտահանձնմանը հասնելու համար ամրոց գրավելու ունակ ոսկով բարձված ավանակի դեր ստանձնած և հայատյացությունը պետական մակարդակի հասցրած ալիևյան բռնապետական վարչախմբի հոգեկան վիճակը: Հակառակ դեպքում իրականությունը ցանկալիի, իսկ հայկական իշխանություններին հունգարականի հետ շփոթելով չէր հայտարարվի, որ այդ ստահակի ազատության մեջ հայտնվելը Լեռնային Ղարաբաղն ազատագրելու ավետաբերն է: Ստիպված ենք հիշեցնել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը վաղուց ազատագրված ինքնիշխան ու անկախ պետություն է, որտեղ անկոչ ադրբեջանցին լավագույն դեպքում կարող է հայտնվել միայն պարանը վզին:

Այժմ անցնենք ադրբեջանական սպայի խորհրանիշի վերածված Ռամիլ Սաֆարովի նման իր հայատյացությունը ոչ թե կացնով, այլ գրչով, բայց նույն մտագարությամբ դրսևորած մեր «ընդդիմախոսի» բարբաջանքներին:

Մեհթիևյան կեղծագրի դեմ մեր բերած փաստարկների ու կատարած հարցադրումների անհերքելիությունը «Ս. Ա.» կոչվածին ստիպել են աննշան

բացառությամբ դրանք շրջանցել՝ պատճառաբանելով, որ դրանց քննադատությունը «չատ մեծ ժամանակ կխլի»: Եվ դա այն դեպքում, երբ, ինչպես ասվեց, այդ տորիչեյան դատարկությունը դրա համար ութ ամիս ժամանակ է ունեցել: Մնացած սակավաթիվ դեպքերում նա աճպարարին վայել պատասխանի երևութականություն է ստեղծել՝ ճարահատյալ սահմանափակվելով անվանարկումներով ուղեկցվող մերկ հայտարարություններով: Ավելին, ընթերցողին մոլորեցնելու նպատակով նա կամ Ռ. Մեհթիկի հետևությամբ «փաստաթղթեր» է հորինել կամ էլ մեր գրածի իմաստը նենգափոխելով՝ ճգնել է իր կեղծարարությունը «հիմնավորելու» հիմքեր ստեղծել: Արդյունքում, իր իսկ մոգոնած և մեզ վերագրած «մտքերը» վիճարկելով՝ նա սկսել է անմիտ մի բանավեճ՝ հընթացս հաջողությամբ ցուցադրելով իր մեղմ ասած՝ կատարյալ տգիտությունը:

Հայոց պատմության նենգափոխմամբ չսահմանափակված այդ պատմաշինարարը գրչի մի հարվածով ադրբեջանականացրել է նաև տարածաշրջանի միջնադարյան պատմությունը: Նա Երևանի պարսկական խանությունը, կարա-կոյունլուների ու ակ-կոյունլուների թուրքմենական պետությունները և պարսկական Սեֆյան տերությունն անվարան հռչակել է ադրբեջանական: Բացի այդ, «աշխարհագրական Հայաստանը» տեղադրել է այսպես կոչված Անատոլիայում՝ իր խանգարված երևակայությանը հարիր լրջությամբ պնդելով, որ Հայաստանը միշտ էլ իրենց պատկանող Իրեվան է անվանվել: Ստացվում է, որ Հայաստանը Թուրանում է, իսկ Երեբունի-Երևանի հիմնադիր Արգիշտի I-ը ադրբեջանցի, ինչը լիովին արժանի է պատմության խեղաթյուրման ադրբեջանական ռեկորդների գրքում ոսկե տառերով գրանցման:

Պատմիչ Մովսես Կաղանկատվացու հայ լինելու մասին մեր բերած անհերքելի ապացույցներին ի «պատասխան» այդ տիասն արևելյան «Որքան էլ հալվա գոռաս, բերանդ չի քաղցրանա» ասացվածքը մոռանալով՝ առանց որևէ փաստարկման թութակի նման նրան քանիցս աղվան է հռչակել: Նույն կերպ «Ս. Ա.» կոչվածն աղվան է դարձրել նաև երբևէ աղվան չտեսած հայ իշխան Հասան-Ջալալին՝ վկայակոչելով Ռ. Մեհթիկի հորինած «արձանագրությունը»: Անվարան պնդել ու պնդում ենք, որ նման արձանագրություն չկա ու չի եղել: Այն թուրքահպատակ Օստապ Իբրահիմովիչ Բերտա Մարիա Բենդեր բեյի հիմնած «Կոտոշ և սմբակ» խորհրդանշանական անվամբ գրասենյակի ադրբեջանական մասնաճյուղի իսկական անդամ Ռ. Մեհթիկի՝ ոչ միայն լաբորանտին, այլև անգամ խաղանենգին անվայել խաբեյության արգասիք է:

Ասվածի լույսի ներքո մեր «աղվանագետի» «Որևէ մեկը տեսե՞լ է աղվաններն խոսող և «Աղվանից պատմություն» աշխատությունն իբրև իր ժողովրդի պատմություն գրած «հայի» և «Որևէ մեկը տեսել է «հայի», որը եկեղեցի կառուցելով կիրամայեր նրա վրա

փորագրել «իմ աղվան ժողովրդի համար» հռետորական հարցերին աներկբա պատասխանում ենք՝ ոչ, չի տեսել, քանի որ թե՛ Մովսես Կաղանկատվացին, և թե Յասան-Ջալալը հայ էին, խոսում էին հայերեն և աղվաններին իբրև իրենց ժողովրդի նման ծառայություններ չեն մատուցել:

«Ս. Ա.» կոչվածը լկտիաբար հայերին մեղադրել է «բոլոր ոչ հայ մեծություններին հայերի վերածելու» անառողջ սովորության մեջ՝ դա ոչ ավել, ոչ պակաս բացատրելով թերարժեքության բարդություն: Եվ դա այն դեպքում, երբ անկարողության պատճառով այդպես էլ համամարդկային որևէ արժեք չստեղծած ադրբեջանցիներն իրենց անպտուղ պատմության արհեստական պողավորմամբ ինքնահաստատվելու սին հույսով, Ադրբեջանում հարգի հանրահայտ երկարականջ չորքոտանու բութ համառությամբ, տասնամյակներ շարունակ հետևողականորեն փորձում են յուրացնել հայ-պարսկական մշակութային փառահեղ ժառանգությունը:

Ձգտելով հերքել Նիզամու պարսիկ լինելու մասին մեր կուռ դիտարկումը՝ «Ս. Ա.» կոչվածն աղճատել է Նիզամու ազգային պատկանելության մասին մեր անհերքելի փաստարկները: Ապա, ոգևորվելով, հողմաղացի դեմ սերվանտեսյան հայտնի հերոսի անմիտ կռիվը հիշեցնող մենամարտ է սկսել իբր մեր, բայց իրականում ինքն իր դեմ: Արդյունքում գրականության ու արվեստի իմացությունից երկու ոտքով կաղող մեր «հանրագիտակն» աջ ու ձախ լեցնելուց հետո առավել ավեր է սփռել: Դիմենք փաստերին: Նա գրել է. «Եթե Նիզամին պարսիկ է, քանի որ ինչպես տեսնում ենք, գրել է պարսկերենով, ապա Վիլյամ Սարոյանը շիկահեր ու կապուտաչյա «անգլո-սաքս» է, քանի որ գրել է անգլերենով, Եվգենի Պետրոսյանը «սլավոն» է, քանի որ հումորիստական համարներով ելույթ է ունենում ռուսերենով, իսկ Իվան Այվազովսկին կատարելապես դելֆին է, քանի որ նրա բոլոր կտավները սիրած ծովային թեմայով են... նշանավոր բանաստեղծ Յովհաննես Թումանյանը պետք է մեկ երրորդով արդրբեջանցի համարվի, մյուս մեկ երրորդով վրացի, իսկ մնացած մեկ երրորդով հայ, քանի որ նա գրել է երեք լեզուներով»: Այս ամենը կարդալուց հետո անհնարին է չապշել, տեսնելով, թե ինչպես է մեր ադրբեջանական «ամենագետ» Կառլսոնը հաջողացրել ընդամենը մի քանի տողում դրսևորել խաբեբայի իր տաղանդը, կատարյալ տգիտությունը, իմացական դալտոնիզմն ու հիվանդագին երևակայությունը: Սկսենք հերթով:

Նախ, ինչպես քիչ անց կտեսնենք, մենք Նիզամու ազգային պատկանելությունը բնավ լոկ նրա ստեղծագործելու լեզվով չենք պայմանավորել: Անգլո-սաքսերը միայն շիկահեր ու կապուտաչյա չեն: Սլավոն լինելը միայն ռուսերենով խոսել չի ենթադրում: Անգամ եթե ըստ «Ս. Ա.» կոչվածի հիվանդագին երևակայության ծովանկարչությամբ զբաղվողը դելֆինի է վերածվում, ապա ոչ թե Իվան այլ՝ մկրտության Յովհաննես անունն

ունեցող Այվազովսկին «կատարելապես» դելֆին չէ, քանի որ նրա շատ նկարներ «սիրած ծովային թեմայով» չեն: Սակայն ապշեցուցիչը ոչ թե մեր նորընծա «այվազովսկիագետի» գիտելիքների մակարդակը մանրահատակայինից ցածր լինելն է, այլ՝ նրան ծովանկարիչ դելֆիններ հանդիպած լինելը: Բայց, քանի որ ոսկով բարձրած ավանակից ամեն ինչ սպասելի է, ճարահատյալ մնում է ենթադրել, որ հանրահայտ ազնվացեղ ավանակներից բացի, ծովանկարչությանը զարկ տալու նպատակով խիստ գաղտնի Ադրբեջան են ներմուծվել նաև դելֆիններ:

Մեր «ամենագետն» իրեն ավելի խայտառակ վիճակի մեջ է դրել Բուրատինոյին հարիր քիթն իր համար դարձյալ մութ անտառ թումանյանագիտության բնագավառ խոթելով: Տգիտության այդ զոհը հայ նշանավոր բանաստեղծ Յովհաննես Թումանյանին ոչ ավել, ոչ պակաս շփոթել է նրա ծնվելուց 74 տարի առաջ թուրքական յաթաղանի զոհ դարձած հայ հանճարեղ բանաստեղծ ու գուսան Սայաթ Նովայի (Յարություն Սայադյան) հետ: Յետևաբար, Յովհաննես Թումանյանի եռագգի լինելու մասին նրա «հումորը» ոչ միայն տեղին չէ, այլև անմիտ է: Ել չենք խոսում այն մասին, որ Սայաթ Նովան հայերենից ու վրացերենից բացի նաև ստեղծագործել է ոչ թե իր ժամանակ գոյություն չունեցած ադրբեջաներենով, այլ՝ թուրքերենի այրումնու խոսվածքով:

«Երաժշտամուլ» «Ս. Ա.» կոչվածը նաև չգիտի, որ ի տարբերություն Ազնավուրի՝ Շերի ու Իրինա Ալեգրովայի երգացանկում հայերեն ոչ մի երգ չկա: Ի դեպ, ի գիտություն նրա, իր ազգային լեզվով՝ վայնախերենով, չէր երգում նաև ադրբեջանցի հռչակված չեչեն Մուսլիմ Մագոմաևը:

Սակայն մեր «ընդդիմախոսի» զավեշտական վրիպումները բերվածներով չեն սահմանափակվում: Այսպես, օրինակ, ներկայացնելով 1992 թ. Ադրբեջանի ժողովրդական ճակատի հրոսակների կողմից խոջալույուն բնակեցված մեսխեթցի թուրքերի սպանդի ադրբեջանական կեղծ վարկածը, նա իրեն բնորոշ տափակ «հումորով» գրում է. «Արդեն ոչ մի բանի վրա չես զարմանում, երբ ԱԺԾ-ի երևակայական «քաջամարտիկի» են վերածվում Սերժ Սարգսյանը... ինչպես նաև հայ ահաբեկիչներ Արաբոն ու Արամոն»: Դրանով նա ուզում է ասել, որ խոջալուի սպանդն իրագործել են ոչ թե ԱԺԾ-ի հրոսակները, այլ հայերը՝ Սերժ Սարգսյանը, Արաբոն ու Արամոն: Իրոք որ մեր «ընդդիմախոսի» տգիտությամբ շաղախված խանգարված երևակայությունը սահմաններ չունի: Նախ՝ բանն այն է, որ Արաբոն (Ստեփանոս Մխիթարյան) ոչ թե ահաբեկիչ է, այլ՝ թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի ծավալած ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչ: Բացի այդ, նա անգամ մեծ ցանկության դեպքում 1893 թ. զոհված լինելու շատ հարգելի պատճառով չէր կարող ԱԺԾ-ի թեկուզ և երևակայական «քաջամարտիկի» վերածվել: Ի գիտություն մեր «հանրագիտակի», Արցախյան ինքնապաշտպանական պատերազմի

ժամանակ ադրբեջանական ագրեսորների դեմ հերոսաբար կռվել է ոչ թե Արաբոն, այլ նրա անունը կրող «Արաբո» ջոկատը: Եվ ապա, Արամո անվամբ հայ «ահաբեկիչ» պատմությանը հայտնի չէ: Բանն այն է, որ այդ պատերազմի ժամանակ ադրբեջանական ագրեսորների դեմ նույն հաջողությամբ կռվել է ոչ թե հայ «ահաբեկիչ» Արամոն, այլ՝ հայոց Արամ նահապետի անունով «Արամո» կոչված ջոկատը:

Ռ. Մեհթիսին հակադարձելիս դրա կարիքը չզգացվելու պատճառով երաժշտարվեստի հետ կապված որևէ խնդիր չենք արժարժել: Սակայն դա նաև հայկական մշակութային ժառանգության կողոպուտից անմասն չմնալու մարմաջով տառապող մեր «երաժշտագետին» բնավ չի հետաքրքրել կամ էլ խանգարել: Նա առանց երկմտելու ադրբեջանական է հայտարարել դուդուկը և այդ գործիքով Ջիվան Գասպարյանի կատարած հայկական ժողովրդական երկու երգ: Աշխարհահռչակ դուդուկահարին առայժմ ադրբեջանցի չհռչակելու համար «Ս. Ա.» կոչվածին երախտապարտ լինելով հանդերձ, չենք կարող չնկատել, որ դուդուկը պատկերված է դեռ X դարի սկզբների հայկական մանրանկարներում, երբ նրա նախնիները դեռ Թուրանից Հայաստան չէին թափանցել ու կյանքում առաջին անգամ ի թիվս այլ բաների նաև դուդուկ տեսել:

Ինչ վերաբերում է նրա ադրբեջանական համարած երգերին, ապա օրինակ «Սարի գյալինը» («Դեղին հարս») հայկական «Վարդ սիրեցի» («Սարի աղջիկ») երգն է: Այն անվարան հայկական ժողովրդական երգ են համարել թուրք երաժշտագետ Գյոքսեն Կարանֆիլը և կոմպոզիտոր ու երաժշտագետ Սանար Յուրդաթափանը: Ի գիտություն մեր կողոպտչի, այն այժմ կատարվում է ոչ միայն ադրբեջաներեն, այլև թուրքերեն, պարսկերեն, արաբերեն ու քրդերեն, ինչը վկայում է հայկական այդ երգի մեղեդու՝ համամարդկային արժեք լինելը:

Այժմ «Ս. Ա.» կոչվածի՝ Նիզամու հետ կապված մեքենայությունների մասին: Նա Ալի ասվածը դիտմամբ վալի հասկանալով, շրջանցել է Նիզամու՝ պարսիկ լինելու մասին մեր բերած հիմնական փաստարկները (թուրքին այդ բանաստեղծի ուխտադրուժ, խոստումնազանց, կողոպուտիչ ու այլ բացասական մակդիրներով բնութագրելը և դփշադուհի կնոջից ունեցած որդուն «իմ թուրքի զավակ» կոչելը) փորձելով ընթերցողին խաբել, թե իբր մենք Նիզամուն պարսիկ ենք համարել միայն ու միայն նրա՝ պարսկերենով ստեղծագործելուց ելնելով: Ընդ որում, մեր վայ «Նիզամիագետը» Նիզամու պարսկերենով ստեղծագործելը պայմանավորել է ժամանակին այդ լեզվի ընդունված լինելով: Մինչդեռ, Նիզամին իրականում պարսկերեն է ստեղծագործել թուրքերենն ու թուրքականն ատող, պարսկերենով մտածող և իր լեզուն պաշտող ազգասեր պարսիկ մտավորական լինելու պատճառով:

Ի հաստատումն ասվածի և ի լրացումն նախկինում բերած փաստերի, վկայակոչենք նորերը, որոնք ոչ պատահաբար չէինք օգտագործել: Նիզամին գրել է. «Թրքաբարո լինելը մեր ներշնչանքը չէ», «Թուրքերեն արտահայտվելը մեզ վայել չէ, //Ով բարձր ծագում ունի, // Նրան բարձր խոսք է պետք», «Ես այն եմ, որ խոզերի առաջ չեմ նետի, // Գոհարագարդ իմ դարի լեզուն», «Թուրքերենը մեր հավատամքը չէ, // Թուրքերեն խոսելը մեզ վայել չէ»:

Որքանով գիտենք, իսկապես ադրբեջանցի (= թուրք) որևէ բանաստեղծ սեփական ժողովրդին ցածր ծագում ունեցող դիտելով մահմեդականի համար անսուրբ կենդանի համարվող խոզ չի անվանել, թուրքերեն խոսելն ու թուրքական բարբերն անվայել, իսկ օտար, տվյալ դեպքում պարսկերեն լեզուն՝ իրենը: Իսկ եթե սխալվում ենք, ապա «Ս. Ա.» կոչվածը և նրա կարգի ու որակի ադրբեջանական այլ «նիզամիագետներն» իրավունք ունեն հանգիստ խղճով սեփականաշնորհել նաև «Եթե քո հայրը թուրք է, նրանից վազն անցիր» խորհուրդը տված պարսիկ հայտնի բանաստեղծ Նասրե Խոսրովին (XI դ.) և նույնիսկ «Թուրք դառնամ, թե սուտ եմ խոսում» խոսքերի հեղինակ, թուրքին վայրենի ու «թլպատված շուն» համարած Վիլյամ Շեքսպիրին: Ի դեպ, մուսավաթական հայտնի գործիչ Մամեդ Էմին Ռասուլ Ջադեն 1922 թ. ադրբեջանական առաջին բանաստեղծ հռչակեց ամբողջ կյանքն Իրաքում անցկացրած պարսիկ հռչակավոր բանաստեղծ Ֆիզուլուն (1494-1556), չիղատակելով Նիզամու (մոտ 1141-մոտ 1209) անունն իսկ: Եվ քանի որ ավտորժակն ուտելուց է բացվում, նա 24 տարի անց ադրբեջանցիացրեց նաև Նիզամուն, քանի որ, ըստ նրա վերջինս ոչ ավել, ոչ պակաս «հեռու է պարսկական ազգայնականությունից, սիրով է լցված թրքականության նկատմամբ»: Թե որքանով է Ռասուլ Ջադեի այս հայտարարությունը համապատասխանում իրականությանը, արդեն տեսանք:

Մեր «ազգագրագետը» փորձել է «հերքել» նաև սումգայիթյան մարդասպան Էդուարդ Գրիգորյանի մոր ադրբեջանուհի լինելու մասին մեր պնդումը: Այդ նպատակով նա մեղմ ասած «խմբագրել» է դատավարության ժամանակ այդ ստահակի մոր տված ցուցմունքը և բանն այնպես ներկայացրել, թե իբր նա 1969 թ. այրիացած ռուս կին է: Իբրև «հիմնավորում» Ռ. Մեհթիևի ուշիմ աշակերտը «վկայակոչել» է դատական գործի 28-րդ հատորի 202-203 էջերը: Սակայն բանն այն է, որ դատական գործը նման հատոր չունի, իսկ իրական հատորներից և ոչ մեկի 202-203 էջերում նման բան չկա: Ավելին, որպեսզի ընթերցողին լիովին հիմարացնի՝ թխել է ադրբեջանական համապատասխան ծառայությունների գործակալ Էդուարդ Գրիգորյանի ազգությունն իբր թե հայ արձանագրած մի «փաստաթուղթ»՝ այն ներկայացնելով որպես մեղադրական եզրակացության պատճեն: Այդ փաստաթղթերի բնագրերի պատճենները մեր ձեռքի տակ

կան, բայց չենք հրապարակում, քանի որ մեկ է՝ «Ս. Ա.» կոչվածն իր սովորության համաձայն և մեզ իր արշինով չափելով պիտի մեղադրի դրանք կեղծելու մեջ: Բայց, որպեսզի ընթերցողը մի ավելորդ անգամ համոզվի, թե ի դեմս նրա ինչպիսի երդվյալ ստախոսի հետ գործ ունի, դիմենք չեզոք վկայի՝ պահեստի գնդապետ Վալերի Կիպորենկոյին: Նա 1988 թ. ԽՍՀՄ ՊԱԿ-ի օպերատիվ-քննչական խմբի կազմում յոթ ամիս աշխատել է Սունգայիթում ու Բաքվում: Ահա թե ինչ է վկայել նա. «Ես, իբրև քննչական խմբի ղեկավար, անմիջականորեն քննել եմ Գրիգորյանին և նրան մեղադրանքներ ներկայացրել. նա կրում էր հայկական ազգանուն, բայց ըստ ազգության նա ադրբեջանցի էր գրանցված: Վիճակն այսպիսին է. նա ծնվել է անբարեհաջող ընտանիքում, նրա մայրն ադրբեջանուհի է, նրա մանկական տարիներին հայրը նրանց լքել է և հեռացել անհայտ ուղղությամբ, այդ իսկ պատճառով նա հայերին խիստ բացասական էր վերաբերում» ([http://analitika.at.ua/news/waleriy\\_Kuporenko\\_besporyadki\\_v\\_baku\\_prokhodili\\_pod\\_temi\\_z\\_he\\_lozungami\\_cho\\_i\\_v\\_sumgaite/2011-01-13-38523](http://analitika.at.ua/news/waleriy_Kuporenko_besporyadki_v_baku_prokhodili_pod_temi_z_he_lozungami_cho_i_v_sumgaite/2011-01-13-38523)): Վալերի Կիպորենկոյի վկայությունը ոչ միայն հաստատում է մեր գրածը, այլև հավելում, որ Գրիգորյանի ազգությունը փաստաթղթերում ադրբեջանցի է գրանցված եղել: Բնականաբար, հարց է ծագում, թե մեզանից ով է զառամախտով տառապողը, ապուշն ու միջնադարյան աղբյուրները միութենական դատախազության նյութերի նման կեղծ մանրագնիմությամբ հետազոտողը. մե՞նք թե ֆիլկինյան փաստաթղթեր թխող «Ս. Ա.» կոչվածը:

Իսկ այժմ Ա. Պուշկինի 1829-1830 թթ. գրած, բայց անավարտ թողած «Տազիտ» պոեմի «Դու վախկոտ ես, դու ստրուկ ես, դու հայ ես» տողի մեր «պուշկինագետի» մեկնաբանության շուրջ: Նա պուշկինյան այդ տողը ենթատեքստից կտրելով ոչ միայն հային վախկոտ ու ստրուկ է համարել, այլև տողերիս հեղինակին ու «Շարաշկինի գրասենյակ» կոչած Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիային առաջարկել է ամեն առավոտ պուշկինյան այդ տողը պետական հիմնի փոխարեն բարձրաձայն կրկնել: Եթե երդվյալ հայատյաց ու անզոր կատաղության զոհ այդ ասինուսանտրոպի ուղեղ կոչված օրգանում գոնե մեկ ծալք լիներ, ապա պուշկինյան տողի նման մեկնաբանությունից և այդօրինակ ստոր առաջարկից առաջ իրեն պիտի որ հարց տար, թե այդ դեպքում ովքեր են ինքն ու հանրահավաքներում միաբերան այդ տողն արտաբերող իր ազգակիցները: Եվ ոչ միայն նրանք, այլև ընդհանրապես ադրբեջանցիները: Չէ որ հենց այդ «վախկոտ» ու «ստրուկ» հայն էր, որ իրեն պարտադրված Արցախյան անհավասար պատերազմում գլխովին ջախջախեց մինչև ատամները զինված, թվաքանակով անհամեմատ շատ և ամեն տեսակի ու ազգության ահաբեկիչների, վարձկանների նավթադոլլարներով օգնության կանչած ու թուրքական բազմակողմանի աջակցություն ստացած ադրբեջանցուն ու ազատագրեց իր հողերի մի մասը:



Այժմ տեսնենք, թե Ա. Պուշկինն իրականում ինչ իմաստ է դրել այդ տողի մեջ: Տազիտը չէչեն պատանի էր, որին հայրը դաստիարակության էր տվել չերքեզի (ըստ պոեմի սևագրերից մեկի՝ քրիստոնյա): «Դու վախկոտ ես, դու ստրուկ ես, դու հայ ես» խոսքերով էր Տազիտից հրաժարվել ավագակաբարո հայրը, երբ որդին, ըստ նրա, չէչենին անվայել երեք մեղք էր գործել: Տազիտը չէր սպանել ու կողոպտել ճամփորդ անպաշտպան հային, չէր բռնել ու օղապարանը վզին հոր մոտ տարել իրենց փախած ստրուկին և, ամենակարևորը՝ միայնակ, վիրավոր ու անզեն ոսոխից եղբոր արյան վրեժը չէր առել: Կատաղած հայրը, այսպիսով, որդուն վախկոտ էր համարել, որովհետև ըստ նրա միայն վախկոտը չի սպանի ու կողոպտի անպաշտպան մարդուն, ստրուկ, քանզի լոկ ստրուկն է ունակ գնահատելու իր նմանի ազատությունը և, վերջապես, հայ, որովհետև միայն հայն իրեն թույլ չի տա վրեժ լուծել վիրավոր ու անզեն ոսոխից: Այսպիսով, հանճարեղ Ա. Պուշկինն իր այդ տողով հային ոչ թե վախկոտության ու ստրկության, այլ՝ գթասրտության ու վեհանձնության խորհրդանիշ է համարել: Դա, բնականաբար, քնած անմեղ մարդուն այլատյացության հողի վրա կացնահարած ստահակին հերոսացնելու ունակ ադրբեջանական զոմբիների բարոյական արժեհամակարգին խորթ իրողություն է:

Իր այդ բարձր բարոյական որակները հայը դրսևորեց նաև Արցախյան ինքնապաշտպանական մարտերի ընթացքում: Օրինակ, երբ հայերը փրկության միջանցք թողեցին Խոջալույում բնակեցված մեսխեթցի թուրք խաղաղ բնակչության համար, ապա Աժճ-ի բաշիբոզուկները նրանց քաղաքական նկատառումներով իրենց հսկողության տակ գտնվող գոտում ոչ միայն գազանաբար կոտորեցին, այլև հայերի հումանիզմը «հատուցեցին» Մարաղա հայկական գյուղի խաղաղ բնակչության ցեղասպանությամբ: Խոջալուի կոտորածն Աժճ-ի կողմից իրագործվելն Այազ Մութալիբովի իսկ պնդմամբ անհերքելի փաստ է: Բացի այդ, Խոջալուի իրադարձությունների ադրբեջանական լեզբները հիմնավոր կասկածի տակ դրած լրագրողներից Չինգիզ Մուստաֆաևը ճիշտ ժամանակին սպանվեց, իսկ Էյնուլլա Ֆաթուլաևը բանտարկվեց: Նրանց կարծիքը կիսող լրագրողուհի Դանա Մազալովան մինչև օրս նույնն է պնդում: Այնպես որ «Ս. Ա.» կոչվածն իզուր է փորձել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի խոսքերը ենթատեքստից կտրելով իրականությունը գլխիվայր շրջված ներկայացնել: Հայերը, իրոք, չեն կատակում, երբ խոսքը վերաբերում է ոչ թե անպաշտպան ու խաղաղ մարդկանց կոտորելուն, այլև՝ ոսոխին արժանի հակահարված տալուն:

Ի դեպ, նախքան «Տազիտ» պոեմը շարադրելը, Ա. Պուշկինը 1829 թ. դեպի Երզրում կատարած ճամփորդության ժամանակ մոտիկից շփվելով հայերի հետ, իր հանրահայտ ուղեգրության մեջ նրանց մասին միայն դրական է արտահայտվել: Նա շեշտել է հայերի ուշիմությունը, մաքրասիրությունն ու հյուրամեծարությունը: Փոխարենը թուրքերի հետ

ճարահատյալ մտրակով հարաբերված բանաստեղծը խիստ բացասական գույներով է ներկայացրել թուրքերին՝ փաստելով նրանց փնթիությունն ու անհյուրընկալությունը և միայն մտրակի ու փողի լեզուն հասկանալը: Նա նաև մեջբերել է գեներալ Ի. Պասկևիչի՝ իրեն ուղղված հետևյալ խոսքերը. «Տեսեք թե ինչպիսին են թուրքերը, նրանց երբեք չի կարելի վստահել»: Ահա թե իրականում ըստ Ա. Պուշկինի ով է հայը և ով է թուրքը:

Հայերին թրակիայից եկած ու Նիկոլայ I-ի կողմից ադրբեջանական «երիվանում» բնակեցված լինելու մասին զառանցող թուրանածին «Ս. Ա.» կոչվածին ու հայերին նրանման վախկոտ ու ստրուկ կոչողներին ի պատասխան առաջարկում ենք ամեն օր՝ արթնանալուց հետո և քնելուց առաջ ըստ իրենց նախասիրության արտասանել. «Ես խոզ եմ», «Ես թլպատված շուն եմ», «Ես ուխտադրուժ եմ», «Ես վայրենի եմ», «Ես ստախոս եմ», «Ես կողոպտիչ եմ»: Դա ոչ միայն կնպաստի նրանց թուրքական ինքնությունը գտնելուն, այսինքն ինքնաճանաչմանն ու ինքնահաստատմանը, այլև կօգնի ճշտելու, թե ո՞վ է «Աստված իմ, ինչու շուն ստեղծեցիր, // Միթե թուրքը քիչ էր, որ շուն ստեղծեցիր» խոսքերի հեղինակ ադրբեջանցի հռչակված պարսիկ բանաստեղծը:

Հ. գ. Երբ հայ աշխարհահռչակ բանաստեղծ մեծ հումանիստ Ավետիկ Իսահակյանին հարցրել են, թե Եվրոպայում ապրած քրիստոնյա մարդ լինելով ինչու եք հայիոյում թուրքերին. չէ՞ որ Քրիստոսը պատվիրել է «սիրիր թշնամուդ»՝ բանաստեղծը պատասխանել է. «Երբ Քրիստոսը գործում էր՝ աշխարհում թուրքեր չկային»: